

Հուսարծակ

ՀԱՄԱՌՈՅԱԿԱՐԱՐԻ ԺԹ. ԴԱՐՈՒՄ ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԻ ՎՐԱՅ

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Հայկական տպագրութիւնը, իր անցած 470 տարուայ (1512-1982 թթ.) երկար ճանապարհով, ունի ուսումնասիրութեան մի ընդուրածակ դաշտ, որ ինչքան հետազոտուի, այնքան աւելի կը պարզուի ու կը յստականայ, ու գեռեւս նոր ու չլուսաբանուած երեսներ երեւան կը գան :

Ինչպէս Հայկական այլ գաղութների տպագրութիւններում, այնպէս էլ Հնդկահայ տպագրութեան խնդրում, կան մի շարք մութմնացած կէտեր, որոնք կարիք ունեն պարզաբանման ու լուսաբանման :

Այդ խնդիրներից մէկը, Կալկաթայում տպագրուած 19-րդ դարի օրացոյցների ուսումնասիրութիւնն է, որ կարօտ է աւելի լուսաբանման :

Այս մասին թէեւ ցարդ մի քանի անգամ գրուել է, բայց մինչեւ այժմ էլ, լրիւ ու անհրաժեշտ ձեւով չի պարզաբանուել, եւ յոյս ունենք որ այս ակնարկով հնարաւոր կը լինի մի փոքր աւելի տեղեկութիւններ տալ հարցի մասին :

Կալկաթայի Մարդասիրական ձեմարանը, ըստ Գ. Զարբհանալեանի, 1816 թ.ից, սկսել է օրացոյց հրատարակել, որը տեւել է շուրջ կէս դար : Բայց քանի որ Մարդասիրական ձեմարանը հիմնուել է 1821 թ.ին, ուստի՝ ըստ ոմանց, չէր կարող դրանից առաջ օրացոյց հրատարակել : Այս առթիւ Գ. Զարբհանալեանը դրում է . «Ի Կալկաթա Հնդկաց, Մարդասիրական ձեմարանի տպարանէն հրատարակուած են օրացոյցք 1816 թուականէն՝ ի 1873 թէպէտեւ վերջի տարիները ընդհատութեամբ»¹ :

1. Գ. Զարբհանալեան, Հայկական Մատենադիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 725:

Հայկ Դաւթեանը իր ընդարձակ աշխատասիրութեան մէջ՝ խօսելով այդ մասին, նոյն կասկածն է յայտնում, իսկ Ժիրայր Դանիէլ-եանը՝ իր «Հայ Պարբերական Մամուլի Հարցեր»³ շահնեկան յօդուածում աւելի հանգամանօրէն անդրադառնալով այդ օրացոյցներին ու դրանց տպագրութեանց, աւելի է լուսաբանում, եւ տալիս կիլլկիոյ Կաթողիկոսարանի մատենադարանի մէջ եղած օրացոյցների ցանկը՝ թուով 11 օրինակ, որոնք մէջ ընդ մէջ, սկսում են 1824 թ.ով եւ հասնում մինչեւ 1857 թ.։

Հայկ Խաչատրեանը իր «Հայկական Օրացոյցների եւ Տարեցոյցների Մատենագիտութիւն 1513-1973» (Երևան, 1976) աշխատութեան մէջ, հետեւելով մինչ այժմ եղած աղբիւրներին, կալկաթայում տպագրուած օրացոյցների սկիզբը դնում է 1816 թ., իսկ վերջը՝ 1874 թ., եւ այդ բոլորը համարելով տպուած Մարդասիրական ձեմարանի տպարանում :

Որպէս լուսաբանութիւն եւ ամբողջացում վերոյիշեալ կարծիքների ու յօդուած-զըռութիւնների, Նոր Զուղայի վանքի զրադարան-մատենադարանում եղած օրացոյցների հիման վրայ, ստորեւ պէտք է աշխատենք աւելի մօտենալ իրականութեան եւ պարզել մի քանի մութ մնացած կէտեր :

Սուրբ Ամենափրկիչ վանքի Ս. Ներսէս Շնորհալի գրադարան-մատենադարանում գտնվում են թուով 21 տարուայ օրացոյցներ, որոնք 19-րդ դարում տպագրուեր են Կայիշաթարում:

Այս օրացոյցներից մի քանիւը, թուով եօթը, որոնք տպագրուել են 1819-1848 թթ.ու ընթացքում, մենք ներկայացրել ենք «Սիոն»ի մէջ հրատարակուած մեր մէկ յօդուածում։ Այդ օրացոյցներից 1819 եւ 1820 թուականներինը կազմել է Աւետ Զնթլում Աւետանը, եւ տպագրել իր տպարանում։ 1823 թ.ինը կազմել է Մարտիրոս Մկրտչեանը, որ տպագրուել է Օճանասիւսեանցի տպարանում, իսկ միւսներից երեքը՝ 1826, 1846 եւ 1848 թուականներինը, Մարդաբարական ձեմարանի տպարանում, եւ մէկը՝ զարձեալ 1846 թ.ին, Արարատեան Ընկերութեան տպարանում՝ փոքրադիր, ոռանի։

Ստորեւ տալիս ենք այդ բոլորի բնդհանուր դանկը:

1. ՕՐԱՅԻՑՅՈՒՆԻՑ ՀԱԼԱՔԵԱԼ ԵՎ ՅՈՐԻՒՆԵԱԼ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՄԱ ԶՐՆԺ-

2. Հայկ Դավթեան, Հայ Գիրքը 1801-1850 Թուականներին, Երեւան, 1967, էջ 69:

3. Գ. Դանիկեան, Հայ Պարբերական Մամուլի Հարցեր, «Հայկագետն Հայագիտական Հանդես», Զ. Խոր., Պէտք, 1977-1978, էջ 312:

4. Լ. Գ. Միհանեան, «Հայ Տպագիր Գրքը 1801-1850 թթ.» և Մի Քանի Նորայիշտ Գրքը, «Ալին» (Եղուսակ), 1970, մի 1-2, էջ 65-80:

լուրմ Աւետեանին 1819 . . . , ի կալկաթա, ի տպարանի
Աւետ Զընթլուրմ Աւետեանի, 56 էջ:

- | | | | | | |
|-----|----------------|----------------|-----------------------|--------------------|-----------------------|
| 2. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | Հաւաքեալ | ... | (Կոյն վերինի նման) | , 1820 թ., 20 էջ |
| 3. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | ամի տեսան | 1823 ⁵ | , 61 էջ | , ի տպ. Օհանասիբիռեան |
| 4. | <i>ՅՈՒՅԱԿ</i> | Վ. | Ա. | Տ. ⁶ | 1826 ... |
| 5. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1846 | ... |
| 6. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1846 | , ի տպ. ի Արարտ. Ընկ. |
| 7. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1848 | , ի տպ. ի Մարդ. Ճեմ. |
| 8. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1853 | » |
| 9. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1854 | » |
| 10. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1855 | » |
| 11. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1856 | » |
| 12. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1857 | » |
| 13. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1858 | » |
| 14. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1859 | » |
| 15. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1860 | » |
| 16. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1862 | » |
| 17. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1863 | » |
| 18. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1866 | » |
| 19. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1868 | » |
| 20. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | » | » | 1869 | » |
| 21. | <i>ՕՐԱՅՈՅՑ</i> | 1875 թուականին | Քրիստոսի ⁷ | ի տպ. ի Մարդ. Ճեմ. | , |

Ի մի բերելով նոր Զուզայի գրադարան-մատենադարանի (Ն. Զ.) կիլիկան Կաթողիկոսարանի մատենադարանի (Կ. Մ.) և Երեւանի Հանրապետական Գրադարանի (Հ. Գ.) ու Մատենադարանի (Մ.) ունեցած օրացուցները, կը ստանանք հետեւեալ պատկերը.

- | | |
|---------------------------|------------------------|
| 1. 1819 ♂. ♂. ♀. | 8. 1828 ♂. ♀. ♂. |
| 2. 1820 ♂. ♂. ♀. | 9. 1829 ♂. ♀. ♂. ♂. ♂. |
| 3. 1823 ♂. ♂. ♀. ♂. ♀. ♂. | 10. 1846 ♂. ♂. ♀. |
| 4. 1824 ♂. ♀. ♂. | 11. 1846 ♂. ♂. ♀. |
| 5. 1825 ♂. ♀. ♂. | 12. 1848 ♂. ♂. ♀. |
| 6. 1826 ♂. ♂. ♀. ♂. ♀. ♂. | 13. 1849 ♂. ♀. ♂. |
| 7. 1827 ♂. ♀. ♂. ♂. ♂. | 14. 1853 ♂. ♂. ♀. |

5. Արանց մասին աւելի բնդարձակ տես՝ նոյն:

6. Ա. Ա. Տ. ։ Վասն Ամի Տեսուն:

7. Արա ծաւալը միւսներից փոքր է, զրպանի օրացոյցի չափով՝ 16×10.5 սմ., իսկ միւսներինը՝ 12×7.4 սմ. շարուածելով:

- | | |
|-----------------------------------|-------------------|
| 15· 1854 թ. կ. Մ. , Ն. Զ. և Հ. Գ. | 22· 1862 թ. Ն. Զ. |
| 16· 1855 թ. կ. Մ. Եւ Ն. Զ. | 23· 1863 թ. Ն. Զ. |
| 17· 1856 թ. կ. Մ. Եւ Ն. Զ. | 24· 1866 թ. Ն. Զ. |
| 18· 1857 թ. կ. Մ. Եւ Ն. Զ. | 25· 1868 թ. Ն. Զ. |
| 19· 1858 թ. Ն. Զ. | 26· 1869 թ. Ն. Զ. |
| 20· 1859 թ. Ն. Զ. | 27· 1875 թ. Ն. Զ. |
| 21· 1860 թ. Ն. Զ. | |

Այս օրացոյցները իրաւամբ միայն օրացոյց չեն, այլ՝ տարեցոյց։ Ոմանց երկրորդ, «չ օրացոյցային մասը, շատ աւելի ընդարձակ է, քան ըստն օրացոյցը, եւ պարունակում են բանաստեղծութիւններ, օգտակար գիտելիքներ, ծննդեան, ամուսնութեան եւ այլ վիճակադրական տեղեկութիւններ, ճառեր, նամակներ, անդերէն լեզուով յօդուած-դրութիւններ եւ այլն։

1819 թ.ի օրացոյցում (էջ 11) տրուած է նաեւ Օճառասփիւռ Միութեան կազմութեան տեղեկագիրը, ըստ որի, միութիւնը կազմուել է 1815 թ.ի Դեկտ.ի 1-ին, Պոմպէյում։ Տրուած է նաեւ միութեան (գրուած է՝ Միաբանութեան, Լ. Մ.) անդամների անունները, զոր հետաքրքրութեան համար բերում ենք ստորեւ.

Մարկոս Մահտեսի Յովսէփիեան Աթոռակալ,
Ղուկաս Մահտեսի Յովսէփիեան,
Մարտիրոս Մկրտչեան,
Մատթէոս Մահտեսի Յովսէփիեան,
Աղազար Յովսէփիեան,
Կարապետ Աստուածատրեան։ Մասնորդ։

1823 թ.ին Մարտիրոս Մկրտչեանի հրատարակած օրացոյցի մասին, Ժ. Դանիէլեանը իր յօդուածում յիշել է, որ «ցարդ ծանօթ չէ հայ գիրքի մատենագիտութեան»։ Յայտնենք որ դրա մասին գրուած է «Սիոն»ի մեր յօդուածում⁸։

Թէեւ այս օրացոյցների թիւը գեռեւս ամբողջացած չէ, բայց ինչպէս Ժ. Դանիէլեանն եւս յիշում է, դրանք միայն օրացոյց չեն, այլ տարեգիրք, որոնց մէջ բաւականին նիւթ կայ Հնդկահայ պատմութեան, գրականութեան ու մշակութային աշխատանքների մասին, որոնցից կարելի է օդտուել զանազան ուսումնասիրութիւնների համար։

Յուսանք, որ մի օր էլ հնարաւոր լինի լրիւ ձեռք բերել այդ օրացոյցները, որոնք կարող են լինել Հնդկաստանի եւ Ս. կղմիածնի գրադարաններում։

8. Ժ. Դանիէլեան, նշ. աշխ., էջ 315, ծանօթ. 160։

9. Տես՝ Լ. Գ. Մինասեան, նշ. աշխ., էջ 69։